«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ *Ֆինանսական կրթության նպատակը, արդյունքներն ու կիրառելիությունը հասարակության մեջ և առօրյա կյանքում*

Հետազոտող ուսուցիչ՝ *Անահիտ Սարգսյան*

Դպրոց՝ *Արմավիրի մարզի Ալաշկերտի Հր Քոչարի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ*

Մենթոր ուսուցիչ՝ *Վարդանյան Շուշան*

Արմավիր 2023

Բովանդակություն

Բովանդակություն.....2

Նախաբան……3

Գրականության ակնարկ.....5

Գործնական համատեքս.....8

Հետազոտության ընթացք.....9

1.1*Ֆինանսական կրթության նպատակը, արդյունքները,Ֆինանսական կրթության նպատակը, արդյունքներն ու կիրառելիությունը հասարակության մեջ և առօրյա կյանքում… ……...……..…...*10

Ամփոփում.....16

Օգտագործված գրականության ցանկ……..17

Հավելվածներ……18

Նախաբան

Նպատակը և հետազոտական հարցը պարզել,թե այսօր դպրոցն ավարտող աշակերտը որքանո՞վ է պատրաստ դիմակայելու ֆինանսական դժվարությունների, կարողանու՞մ է արդյոք ցուցաբերել տարրական ֆինանսական գիտելիքներ և դպրոցն ի՞նչ չափով է օգնում նրան այդ հարցում: Հարց-*Արդյո՞ք օգտակար և կիրառելի են ֆինանսական կրթության մասին դպրոցում ստացած գիտելիքները:*

Թեմայի կարեւորությունը եւ նշանակությունը Ձեր՝թիրախային խմբի համար:Իմ կարծիքով թեման կարևորվում է սոցիալական և տարիքային բոլոր խմբերում , քանի որ մարդը ֆինանսի ու փողի հետ առնչվում է ամբողջ կյանքում:Այժմ ստեղծվել է հնարավորություն այդ գիտելիքները ձեռք բերել դպրոցական դասընթացի շրջանակում՝ ֆինանսական կրթության բաղադրիչները ինտեգրելով տարբեր առարկաների:Կրթված հասարակությունում պետք է կիրթ լինել նաև ֆինանսական գործարքներ կատարելիս,ստուգել ռիսկերն ու ճիշտ որոշումներ կայացնել; Հետևաբար կարելի է ասել,որ այս հարցում թիրախային խումբ է հանդիսանում ամբողջ հասարակություն: Ո՞ր առանցքային կոմպետենցիային կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը: Մաթեմատիկան մարդկային քաղաքակրթության լեզուն է և այն թափանցել է մարդկային կյանքի բոլոր ոլորտները:Ֆինանսական կրթությունը մաթեմատիկայի դասերին առաջին հերթին պետք է նպաստի աշակերտի մաթեմատիկական կարողունակության զարգացմանը: Այն նպաստում է նաև զարգացնելու լեզվական գրագիտությունը,սովորել սովորելու կարողությունը, տնտեսական, ինքնաճանաչողական, քաղաքացիական կարողությունները: Վերապատրաստման ո՞ր թեմայի շրջանակում է անդրադարձ կատարվել այս հիմնախնդրին/ոլորտին: Մարդը ֆինանսի հետ առնչվում է իր կյանքի բոլոր հատվածներում և ամբողջ կյանքում անհրաժեշտ է լինում կիրառել դպրոցում ստացած գիտելիքներն ու հմտությունները; Վերապատրաստման ընթացքում այս խնդրին անդրադարձ կատարվեց համարյա բոլոր թեմաների

շրջանակներում:Կառուցվեցին դիագրամներ ու աղյուսակներ,քննարկվեց մարդու արժեքային համակարգում փողի դերը,օրենսդրական նորմերն ուսումնասիրելիս ևս առնչվեցինք այս թեմային:

Գրականության ակնարկ

Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: Պարտադիր է կատարել հղում աղբյուրին Այս հետազոտական աշխատանքում ցանկանում եմ առաջ քաշել մի շարք արդիական հարցեր:Ծնողների, աշակերտների,ուսուցիչների հետ քննարկել ֆինանսական կրթությանը վերաբերող հարցեր ու պարզել,թե դպրոցի շրջանավարտը,որ ստացել է միջնակարգ կրթություն, որքանով է պատրաստ հարկ եղած դեպքում ցուցաբերել ֆինանսական գիտելիքներ ու հմտություններ,կարողանա կիրառել այդ գիտելիքները տարբեր իրադրություններում(խանութում՝ առևտուր անելիս,ընտանիքում՝տնտեսություն վարելիս,բանկերում՝ բանկային գործարք կատարելիս և այլն): Պլանավորումը՝նպատակները իրագործելու ամենաարդյունավետ միջոցն է:Ցանկացած ոք պետք է կարողանա պլանավորել իր բյուջեն և կառավարի այն՝նպատակներին հասնելու համար,վերահսկի եկամուտներն ու ծախսերը: Փոխվում են ժամանակները, փոխվում են նաև մարդիկ, ու մարդը շարժվում է ժամանակի հրամայականով:Ժամանակակից քաղաքացին դարձել է ավելի տեղեկացված: Մինչ այժմ դպրոցում ֆինանսական հարցերի վերաբերյալ ստացած գիտելիքները բավարար չէին հասուն քաղաքացի ձևավորելու համար: ՀՀ հանրակրթության պետական կրթակարգը հնարավորություն է ընձեռում որպես առաջատար բնութագրիչներ ընդունել գիտելիքի կիրառելիությունը և 2 հասանելիությունը: Կիրառելիության պահանջը դրվում է որպես անհրաժեշտ պայման:Ֆինանսական կրթության ժամանակ ստացած գիտելիքը սովորողը պետք է կարողանա կիրառել, որպեսզի բավարարի լիարժեք ապրելու և զարգանալու հմար անհրաժեշտ պահանջները: Առօրյա կյանքում ֆինանսներին առընչվող շատ գործողություններ անձը կատարում է զուտ կենցափորձի հիման վրա: Այդ կենսափորձը նրան կօգնի միայն ծանոթ իրադրություններում:Ժամանակակից տեխնիկական առաջընթացի շնորհիվ կյանքի իրադրությունները շատ արագ են փոփոխվում:Ֆինանսական կրթության հիմնական նպատակն է անծանոթ իրադրություններում

համապատասխան որոշումներ կայացնելու և ճիշտ գործողություններ ձեռնարկեու կարողունակության ձևավորումը:Այդ իրադրություններում մարդը պետք է ընթանա հետևյալ սխեմայով Ընկալի -հասկանա -կիրառի - վերլուծի - գնահատի-ստեղծագործի Հարցում կատարեցի 3-5 տարեկան երեխա ունեցող 5 ծնողների շրջանում ու պարզվեց,որ եթե երեխան նույնիսկ չի պատկերացնում ,թե ինչ է փողը,տեսնելիս ուզում է ունենալ այն (ասում են սիրում է փող): Կրթության այս ոլորտին քաղաքացուն պետք է ծանոթացնել դեռևս փոքր 3 տարիքից,որպեսզի կրթությունը ընթանա պարզից բարդ շղթայով: Այսինքի ուսումնական աշխատանքի մեթոդների և տեսակների բազմազանությունը կլինի այն երաշխիքը,որը ապահովում է ֆինանսական գիտելիքի հմտության և վերաբերմունքի ներդաշնակ ձևավորումն ու զարգացումը: Ֆինանսական կրթությունը ինտեգրված է մի շարք դպրոցական առարկաների՝ տարրական, միջին և բարձր օղակներում,հետևաբար ֆինանսական գիտելիքի, հմտության և վերաբերմունքի ձևավորման խնդիրը պետք է դիտարկել այդ առարկաներում նյութի բովանդակության հետ ներդաշնակեցված: Փողը ՝դա յուրահատուկ ապրանք է,որը կարելի է փոխանակել մյուս բոլոր ապրանքների հետ,ինչպես նաև չափել բոլոր ապրանքների արժեքները:Աշակերտները երկրորդ դասարանում արդեն ճանաչում ու արժևորում են փողի դերը: Աշակերտներին ֆինանսական աշխարհի հետ ծանոթացնելիս պետք է շատ զգույշ լինել և կիրառել մի քանի պատվիրաններ՝ (Հասմիկ Իսրայելյան << Մաթեմատիկան առանց բանաձևերի>>)

- Լինել ֆինանսապես առողջ
- Փողը նպատակ չէ,պետք չէ այն ֆետիշացնել,սակայն այն գործիք է որը պետք չէ թերագնահատել
- Ֆինանսական որոշումներում չկան բացարձակ ճշմարտություններ
- Պետք է շարունակաբար թարմացնել ֆինանսական գիտելիքները
- Այն առարկաների ուսուցիչները որոնց ինտեգրված է ֆինանսական կրթությունը պետք է համագործակցեն միմյանց հետ
- Ֆինանսական կրթությունը պետք է ընթանա պարզից բարդ
- Ֆինանսական կրթություն իրականացնելիս պետք է կիրառել բոլոր մեթոդներն ու գործիքները նյութը հետաքրքիր դարձնելու համար

Թեմաներն ուսումնասիրելիս պետք է կիրառել համագործակցային փոխներգործության մեթոդներ:Այստեղ շատ կարևոր է կազմակերպել խմբային աշխատանքներ,որտեղ պետք է կարևորել խմբի յուրաքանչյուր անդամի տեսակետը:Այդ տեսակետը կընդունվի միայն այն դեպքում,եթե առաջարկողը կարողանա հիմնավորել համոզմունք առաջացնել խնբի մյուս անդամներ մոտ:

Գործնական համատեքստ

Մաթեմատիկական կրթության բովանդակության միավորը պետք է լինի մեթոդը: Ինչպես նշում են Ալեքսանդր և Գուրգեն Խաչատրյանները՝ <<Խնդիրների լուծումը տարբեր մեթոդներով ունի կարևոր մեթոդական նշանակություն, և մեծ հնարավորություններ է ընձեռում մաթեմատիկայի ուսուցման պրոցեսի կատարելագործման համար>>: Մինչ հետազոտության խնդրի ընտրությունը առանձնացրել եմ դասավանդման պրոցեսում առկա խնդիրներից մի քանիսը

❖ Նպաստել մոտիվացիայի բարձրացմանը

❖ Բարձրացնել առաջադիմությունը

❖ Հետաքրքրությունն առաջացնել ֆինանսական կրթության նկատմամբ

❖ Զարգացնել համագործակցելու կարողությունը

❖ Զարգացնել ինքնուրույն աշխատելու հմտություն

Շատ կարևոր է տարրական ֆինանսական գիտելիք ունենալը: Այժմ ստեղծվել է հնարավորություն այդ գիտելիքները ձեռք բերել դպրոցական դասընթացի շրջանակում՝ թիրախային խումբ ընտրելով 7,10,12րդ դասարանի աշակերտներին,սակայն ուսումնասիրելով մաթեմատիկան որպես ֆինանասական կրթություն կարելի է ասել ,որ թիրախային խումբ հանդիսանում է նաև հասարակությունը, քանի որ ճիշտ ֆինանսականան գործողություն կատարելու համար պետք է ունենալ կրթված հասարակություն: Այսպիսով՝ մեր հիմնական նպատակը պետք է լինի երեխաներին մաթեմատիկական մեթոդ սովորեցնելը, իսկ դրանից հետո նրանց մոտ կձևավորվի մաթեմատիկական մտածելակերպ՝ յուրաքանչյուր հարցում, յուրաքանչյուրի մոտ որոշակի աստիճանի:Աշխաըտելով երեխաների հետ փորձել եմ ներկայացնել կատարված աշխատանքի հավաքագրվելիք տվյալների արդյունքը դիագրամանների տեսքով: Ֆինանսական կրթության մասին հետազոտվող նյութի հարցին առավել ճշգրիտ պատասխան տալու համար որոշեցի հարցաշար դիտարկում անցկացնել տարբեր տարիքային խմբի աշակերտների մոտ:Որպես

թիրախային խումբ ընտրեցի աշակերտներ 7,10,12րդ դասարաններից:Յոթերորդ դասառանի աշակերտների համար կազմեցի հետևյալ հարցաթերթիկը:

Հետազոտությաքն ընթացքը

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ 7 դասարան

1.Ի՞նչ է եկամուտը:

2.Ի՞նչ եկամտի աղբյուրներ գիտեք:

3.Թվիր եկամուտի տեսակները:

4.Ինչպե՞ս կարելի է հաշվել ընտանեկան եկամուտներն ու ծախսերը:

5.Ո՞րն է անձնական ու ընտանեկան բյուջեների տարբերությունը:

6.Խնդիր : Ընտանիքում եկամուտը ամսական կազմում է 300000դրամ:Այդ գումարի 10 % խնայելուց հետո մնացած գումարը բաշխում են սննդի,կոմունալ վճարումների և այլ ծախսերի վրա,որոնք հարաբերում են ինչպես 5:1:3 : Որքա՞ն կլինի ընտանիքի խնայողությունը 4 ամիս հետո:Որքա՞ն կկազմի ամսական ծախսերը դրամով:

Այստեղ նախ պետք է նկատել այն ,որ աշակերտների մեծ մասը չի տիրապետում ֆինանսական ոլորտում կիրառվող լեզվին;Նրանց համար ավելի հեշտ էր հարցերին պատասխանել բանավոր,սեփական լեզվամտածողուտյամբ: Հետևաբար ֆինանսական կրթություն իրականացնելիս, շատ կարևոր է ծանոթ լինել ֆինանսական ոլորտում կիրառվող տերմիններին: Այնուհետև հանձնարարեցի ծնողների օգնությամբ կազմել իրենց ընտանիքների եկամտի ու ծախսերի գրաֆիկական պատկերը երկու ամիսների կտրվածքով:Պետք է նշել,որ մեծ մասը բավականին ճիշտ էր ըմբռնել թեման և կարողացել էին ցույց տալ իրենց ընտանիքների ֆինանսական վիճակը,բայց գրաֆիկ կազմել մեծ մասը թերացել էր: Բոլոր աշակերտները շատ լավ լուծել էին 6րդ՝ վերջին խնդիրը, նրանք կարողացել էին ճիշտ հաշվել թե՛ թվի տոկոսը ,թե՛ թվի մասերը: Այստեղ կարևոր է նշել նաև այն փաստը,որ ժամանակակից սերունդը դեռևս փոքր տարիքից կարևորում է փողի դերն ու նշանակությունը և ձգտում է հետագայում որևէ բիզնես ունենալու:

7րդ դասարանի աշակերտների քանակը 18

Հարցերի քանակը 3

Արդյունքների ամփոփման դիագրամա



1.1Ֆինանսական կրթության նպատակը, արդյունքները

Ֆինանսական լեզվամտածողությունը ավելի լավ կարելի է և պետք է զարգանա ֆին.կրթությանը ինտեգրած մյուս դասաժամերին,օրինակ հասարակագիտության ժամին,որպեսզի հանրահաշվի հետ կապը հնարավոր լինի ավելի սերտ դարձնել: Աշակերտը պետք է իրարից տարբերի արժեքն ու գինը,կարիքն ու ցանկությունը, ծախսերն ու խնայողությունը : Սրանք բազային գիտելիքներ են, որոնք կիրառելու համար աշակերտը պետք է հստակ սահմանի դրանք; Սակայն մեր երեխաները հաճախ չեն կարողանում ճիշտ ու հստակ արտահայտել իրենց մտքերը՝ տարրական գիտելիքներ չունենալու հետևանքով: Մեր օրերում երեխաները հաճախ են գտնվում Հայաստանի սահմաններից դուրս,՛այդ պատճառով հանրահաշվի ժամերին ֆինանսական

կրթությունը ինտեգրելիս,ես կարևորում եմ արտարժույթի հետ գործարքներ կատարելու հմտությունը: Դրա համար անհրաժեշտ է, որ աշակերտը կարողանա ճանաչել տարբեր երկրների արտարժույթները, կարողանա հաշվարկել և համեմատել միևնույն ապրանքի կամ ծառայության գինը տարբեր փոխարժեքներով, կարողանա հաշվարկել 7 արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը իր ծախսերի և եկամուտների վրա, գիտակցի,որ արտարժույթի փոխանակումը պետք է կատարել համապատասխան ֆինանսական կազմակերպություններում: Հակառակ դեպքում հնարավոր են որոշակի ռիսկեր (օրինակ կեղծ փողերի տրամադրում): Ավելի բարձր դասարանում այս թեմայի շուրջ արված հետազոտությունը ցույց տվեց,որ չնայած աշակերտների ունեցած որոշակի պատկերացումների,ֆինանսական գրագիտությունը նրանց մոտ կաղում է , և ավելի շատ տեղեկացված ն իրենց տանը կամ մեկ այլ վայրում ստացած ինֆորմացիայից: Հաջորդ կարևոր թեման, որին պետք է անդրադառնալ իններորդ դասարանում «Երկրաչափական պրոգրեսիա» թեման ուսումնասիրելիս,դա պարտքերի ու վարկերի կառավարումն է: Տղաների մեծ մասը երազում է ունենալ ավտոմեքենա և այն ձեռք բերելու ամենահեշտ ու մատչելի միջոց նրանք համարում են վարկով ավտոմեքենա գնելը: Նրանց պետք է սովորեցնել վարկերի հետ կապված հաշվարկներ կատարել,համեմատել տարբեր բանկերում վարկի տոկոսները և կարողանալ արդյունավետ որոշումներ կայացնել: Տասներորդ դասարանցիների համար կազմեցի հետևյալ հարցաթերթիկը(հարցմանը մասնակցել են 6 տասներորդ դասարանցիներ):

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ 10դասարան

1.Ի՞նչ է վարկը:

2.Վարկի ի՞նչ տեսակներ գիտեք

3.Ի՞նչ է ավանդը

4. ֆինանսի վրա ազդող ի՞նչ ռիսկեր կարող են լինել

5.Ո՞րն է մշտական և ոչ մշտական եկամուտների տարբերությունը (բեր օրինակներ)

6.Երբևէ՞ մասնակցում ես քո ընտանիքում ֆինանսական թեմայի վերաբերյալ քննարկումներին:

Այստեղ ևս պետք է նշել, որ աշակերտների մեծ մասին պետք է ավելի լավ ծանոթացնել ֆինանսական ոլորտում օգտագործվող տերմիններին: Աշակերտները հիմնական շեշտը դնում էին այն հանգամանքի վրա,որ ավելի ճիշտ է չօգտվել բանկային ծառայություններից, քանի որ մեր երկրում շատ բարձր են բանկերում գործող տոկոսները; Բանկերում հիմնականում կազմվում են երկար շարադրանքով ու կրթության միջին մակարդակ ունեցող քաղաքացու համար անհասկանալի բանկային պայմանագրեր: Դա է պատճառը ,որ քաղաքացիները հիմնականում խուսափում են այդ պայմանագրերը ընթերցել,որն էլ հիմնականում դառնում է ֆինանսական վեճերի առարկա: Վարկերի տեսակներն են՝

- սպառողական վարկ
- հիփոթեքային վարկ
- գյուղատնտեսական վարկ
- բիզնես վարկ
- ուսումնական վարկ
- լոմբարդային վարկ
- ավտովարկ
- հատուկ վարկավորման ծրագրեր,որոնք տրամադրվում են հատուկ թիրախային խմբերի:

Ըստ ժամկետայնության վարկերը լինում են՝ կարճաժամկետ (մինչև 1 տարի) միջնաժամկետ (1-3 տարի) և երկարաժամկետ (3 և ավելի տարի):Որքան երկար է վարկի տևողությունը այնքան բարձր է նրա գինը: Վարկի հետ կապված էական կարևորություն ունի նաև վարկի մարման տեսակի ընտրությունը Սրանք կարևոր գիտելիքներ ու հմտություններ են որոնք աշակերտը պետք է ձեռք բերի ուսումնառության ընթացքում: Վարկ վերցնելու ձեր որոշումը կարելի է համարվել հաջողված եթե՝

1.վարկը չի վատթարացնի ձեր ֆինանսական վիճակը

2.հստակ գիտեք թե ինչի վրա եք այն ծախսելու

3.վարկը կօգնի ձեզ ապահովելու ավելի բարեկեցիկ ապագա

4.տվյալ վարկը շուկայում եղած վարկերի համեմատ ամենալավ տարբերակն է:

Վարկերը մարելիս պետք է ուշադրություն դարձնել նաև դրանց ծախսատարության վրա ,և առաջնություն տալ այն վարկերի մարմանը,որոնք ավելի « թանկ» են:

Հաջորդ կարևոր թեման,որն 10 ուսումնասիրվում է հանրահաշվի «Աստիճանային ֆունկցիա », «Վիճակագրություն և տրամաբանության տարրերը» բաժիններում, դա գնաճի, գնանկման, լողացող փոխարժեքի և թոխարժեքի ռիսկի մասին թեմաներն են: Գնաճը ցույց է տալիս,թե որոշակի ժամանակահատվածում որքան են աճել կամ նվազել ապրանքների և ծառայությունների գները:Աշակերտների հետ ունեցած զրույցներից պարզվեց, որ նրանք լավ ծանոթ են այս եզրույթին ,սակայն չեն կարողանում տարբերել անվանական և իրական եկամուտները:Աշակերտներին հանձնարարվեց հաշվել իրենց ընտանիքների սպառողական զամբյուղների չափը և համեմատել այն նախորդ տարում ունեցած զամբյուղի հետ:Այնուհետև գտան երկու տարիների սպառողական զամբյուղների տոկոսային տարբերությունը(առանց տվյալներ հրապարակմամբ):

Խնդիր. Նշված վարկի տեսակներից ընտրել ուսումնական վարկը և նշել վարկի մարման ժամկետայնությունը (որոշակի գումարի սահմաներում):



Այս աշխատանքը կատարելիս նրանք համոզվեցին ,որ շատ կանոր է ֆինանսական բավարար գիտելիքներ ունենալը: Երբ ուսուցիչը սկսում է ուսումնասիրել և դասավանդել ֆինանսական կրթության մասին գիտելիքները պետք է անպայման տեղյակ լինի Ֆինանսական կրթության 10 պատվիրաններին և աշակերտներին էլ սովորեցնի առաջնորդվել այդ պատվիրաններով

1.Մենք բոլորս առնչվում ենք ֆինանսական աշխարհի հետ, ուրեմն պետք է լինենք ֆինանսապես առողջ

2.Փողը նպատակ չէ, պետք չէ այն ֆետիշացնել:Փողը գործիք է, որի դերը սակայն, չպետք է թերագնահատել:

3. Ֆինանսական որոշումներում չկան 11 բացարձակ ճշմարտություններ, ամեն ինչ կախված է անձից և իրավիճակից:

4.Ֆինանսական աշխարհն ամեն օր զարգանում է,և կարևոր է շարունակաբար թարմացնել ֆինանսական գիտելիքները,ծանոթանալ նոր գործիքներին,իրավիճակներին:

5. Բացի դպրոցում ստացած գիտելիքներից ֆինանսական կրթությունը պետք է ունենա շարունակություն ողջ կյանքի ընթացքում:

6.Քանի որ ֆինանսական կրթության բաղադրիչը ինտեգրված է մի քանի դպրոցական առարկաների ,ուրեմն այն պահանջում է ուսուցիչների համագործակցությունը:

7.Դասերի ընթացքում պետք է կիրառել ուսուցման ակտիվ և աշակերտակենտրոն մեթոդներ՝խաղեր,խմբային, նախագծային և հետազոտական աշխատանքներ:

8.Ֆինանսական կրթությունը օգտակար է ոչ միայն սովորողների այլ նաև նրանց ընտանիքների համար:

9.Ինտեգրում նշանակում է հավասարեցում առարկայական և ֆինանսական կրթության նպատակների միջև:

10.Ֆինանսական գիտելիքները և հմտությունները պետք է փոխանցել պարզից դեպի բարդ սկզբունքով և տրամադրել սովորողների տարիքին համապատասխան տեղեկատվություն: Հետազոտվող հարցերից վերջինը ընտրեցի այն,թե աշակերտների շրջանում ինչ պատկերացում կա խնայողության հետ կապված և կազմեցի հետևյալ հարցաթերթիկը 12 դասարանի աշակերտների համար:(Ընտրեցի այս տարիքային խումբը քանի որ դպրոցն 12 ավարտելուց հետո նրանց որոշ մասը գուցե և դառնան ուսանողներ,իսկ սա այն տարիքն է,երբ ավելի շատ է զգացվում խնայողաբար ապրելոի կարիքը)

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ 12 դասարան

1.Խնայողության ի՞նչ ձևեր գիտես

2.Ինչպե՞ս որոշել խնայողության չափը

3.Ի՞նչ օգուտներ ունի ավանդը

4.Ինչպե՞ս խնայել սննդի վրա

5.Ինչպե՞ս ներդնել ավանդ

Ավանդ ներդնելիս պետք է իմանալ կարճաժամկետ և երկարաժամկետ ներդրումների առանձնահատկությունները, արժեթղթի շուկայական գնի և անվանական արժեքի տարբերությունը,ռիսկի ռիսկի, իրացվելիության և եկամտաբերության փոխադարձ կապը,կարևորի մասնագիտական խորհրդատվության դերը:

12րդ դասարանում սովորում է 12 աշակերտ:



Ամփոփում

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին: Այս հետազոտական աշխատանքը կատարելիս պազեցի մի շարք հարցեր,որոնց լուծումը գտնելը կնպաստի ֆինանսական կրթությունը առավել հետաքրքիր, մատչելի ու կիրառելի դարձնելուն:Նախ հասկացա մի բան ,որ որպես ինտեգրված առարկա , կարելի էր ավելի թեթև ծրագրով այն մտցնել դպրոցական ծրագիր: Ֆինանսապես կիրթ ու հասուն լինելը յուրաքաչյուր քաղաքացու պարտքն է և չի կարելի երբեք այն անտեսել:Սակայն պետք չէ նաև ծանրաբեռնել,քանի որ դպրոցկան ծրագիրը առանց այն էլ բեռնաթափման կարիք ունի:Այսօր մեր հասարակությանը պետք են ավելի շատ կյանքի հմտություններով օժտված քաղաքացիներ, Ֆինանսական կրթությունը կյանքի հմտություններից մեկն է,որի հետ մարդն առնչվում է անկախ տարիքից: Ֆինանսական կրթություն իրականացնելիս պետք է քննարկել իրավիճակին համապատասխան հնարավոր լուծումները,ոչ թե պատրաստի արդյունքներ տրամադրել:Այս մոտեցումը կօգնի սովորողներին հետագայում պատասխանատու և արդյունավետ որոշումներ կայացնել: Կարևոր է նաև սովորողի մոտ ձևավորել այն գիտակցությունը, որ պետք է իմացածը կիրառել և փոխանցել ընտանիքին, ընկերներին: Չնայած ֆինանսական կրթությունը ինտեգրվում է աստիճանական եղանակով և մի քանի առարկաների շրջանակում, սակայն հետազոտության արդյունքները ցույց տվեցին,որ աշակերտները լավ չեն տիրապետում այս ոլորտի տերմիններին: Վերջապես այն հարցին,թե կարևոր է արդյոք ֆինանսական կրթությունը մեր վաղվա օրը կերտող սերնդի համար կարելի է պատասխանել միանշանակ՝ այո: Մենք աշակերտներին սովորեցնում ենք ճիշտ կառավարել ֆինանսները ավելի շատ եկամուտ ստանալու համար, սակայն ըստ իս մեր ծրագրում բացակայում է բարեգործություն կատարելու ճիշտ արվեստը: Ելնելով իմ կատարած հարցումների արդյունքից պարզեցի, որ ավագ դասարանի աշակերտների ակտիվությունը, խթանում է նրանց հետաքրքրասիրությունը, հնարավորություն է տալիս ստեղծագործել, մտածել և ապրել փնտրածը

գտնելու բերկրանքը: Այսօր Հայաստանում տեղի ունեցող իրադրությունից գտնում եմ, որ այս թեմային ևս պետք է տեղ հատկացվի կրթական ծրագրում,թեկուզ զուտ մարդկային տեսակետից: Շնորհակալություն և թող ԽԱՂԱՂ լինի Հայոց աշխարհս:

Օգտագործված գրականության ցանկ

Օրինակ՝ 1. Թադեւոսյան Գ., Որակական սոցիալական հետազոտություններ. Տեսություն, մեթոդաբանություն եւ մեթոդ: Ուսումնական ձեռնարկ, Երեւան, Երեւանի համալս. հրատ., 2006 2. ՍՈՑԻԵՍ փորձագիտական կենտրոն, ԴԱՏԱ գործընկերներ.(2021). Սոցիալական հետազոտութ յան էթիկական ուղենիշներ. կիրառական ուղեցույց. Երեւան: «ԴԱՏԱ. տվյալներ հաշվետու եւ թափանցիկ գործունեության համար» ծրագիր 3. Teaching methods overview, https://fctl.ucf.edu/teaching-resources/teaching strategies/teaching-methods-overview/, 08/07/2022 Օգտագործված գրականություն ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Հավելվածներ

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ 10դասարան

1.Ինչ է վարկը: 2.Վարկի ինչ տեսակներ գիտեք 3.Ինչ է ավանդը 4. ֆինանսի վրա ազդող ինչ ռիսկեր կարող են լինել 5.Որն է մշտական և ոչ մշտական եկամուտների տարբերությունը (բեր օրինակներ) 6.Երբևէ մասնակցում ես քո ընտանիքում ֆինանսական թեմայի վերաբերյալ քննարկումներին

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ 7 դասարան

1.Ինչ է եկամուտը 2.Ինչ եկամտի աղբյուրներ գիտեք 3.Թվիր եկամուտի տեսակները 4.Ինչպես կարելի է հաշվել ընտանեկան եկամուտներն ու ծախսերը 17 5.Որն է անձնական ու ընտանեկան բյուջեների տարբերությունը 6.Խնդիր : Ընտանիքում եկամուտը ամսական կազմում է 300000դրամ:Այդ գումարի 10 % խնայելուց հետո մնացած գումարը բաշխում են սննդի,կոմունալ վճարումների և այլ ծախսերի վրա,որոնք հարաբերում են ինչպես 5:1:3 Որքան կլինի ընտանիքի խնայողությունը 4 ամիս հետո:Որքան կկազմի ամսական ծախսերը դրամով :

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ 12 դասարան

1.Խնայողության ինչ ձևեր գիտես 2.Ինչպես որոշել խնայողության չափը 3Ինչ օգուտներ ունի ավանդը 4.ինչպես խնայել սննդի վրա 5.Ինչպես ներդնել ավանդ